706

1. Հոգնել եմ արդեն, ես էլ ուժ չունեմ,
Այս ճանապարհին ես թուլացել եմ,
Գերի եմ ընկել ու չարչարվում եմ,
Ու ինձ թվում է, թե ներում չունեմ:

Գիրկդ եմ ընկնում, ինձ փրկի՛ր (օգնիր), Հիսո՛ւս,
Այս ճանապարհին չթողնես, Հիսո՛ւս,
Սուրբ ձեռքերիդ մեջ պահի՛ր իմ կյանքը,
Որ ոչ մի ոսոխ չխլի կյանքս:

2. Տկարացել եմ ու վիրավորվել,
Հիվանդ սիրտս եմ Քո առջև բերել,
Խոստովանում եմ՝ կարիքդ ունեմ,
Իմ այս վիճակից ես ամաչում եմ:

3. Հիմա նայում ես ուղիղ աչքերիս
Եվ իմ վիրավոր, զղջացող սրտին,
Ասում ես. «Որդի՛ս, Քո բարեխոսն եմ
Եվ Իմ արյունով Ես քեզ փրկել եմ»:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025